Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԻԼԵՖԵԼԴ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արմեն Ղազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** ք. Բիլեֆելդ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2021թ. նոյեմբերի 9-ից 11-ը

4. **Հրավիրող կողմը.** Բիլեֆելդի օտարերկրացիների հարցերով գերատեսչություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի շրջանակում հայկական կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ անձանց նույնականացնելու համար հարցազրույցներ անցկացնել:

6. **Քննարկված թեմաները.**

Այցի շրջանակում Ա. Ղազարյանը հանդիպել է Բիլեֆելդ նահանգի օտարերկրացիների հարցերով գերատեսչության ղեկավար Տորսթեն Բյոհլինգի հետ: Կողմերը քննարկել են ՀՀ-ԵՄ ռեադմիսիայի համաձայնագրին առնչվող աշխատանքային մի շարք հարցեր, անդրադարձել են տարատեսակ տեխնիկական հարցերի, տարվող աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով քննարկել են հնարավոր տարբերակներ, գնահատել երկկողմ փոխգործակցությունը միգրացիոն համագործակցության առումով, ինչպես նաև ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակում Հայաստանի կատարողականը, որը գերմանական կողմը խիստ բարձր է գնահատել: ՄԾ պետ Ա. Ղազարյանն ընդգծել է ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման շուրջ երկխոսության գործընթացի մեկնարկի կարևորությունը ՀՀ-ի համար:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Աշխատանքային այցի շրջանակում Ա. Ղազարյանը հանդիպել է նաև Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի ծրագրի ղեկավար Մանֆրեդ Հեյնելին: Կողմերը փոխադարձ գոհունակություն են հայտնել բարձր մակարդակի համագործակցության առթիվ, արձանագրել են հայաստանյան ծրագրի երկարացման կարևորությունը: Ա. Ղազարյանը ներկայացրել է վերաինտեգրման առաջնային աջակցության պետական ծրագրի երկու տարվա արդյունքները, ընդգծել կազմակերպության (ERRIN) աջակցությամբ ՄԾ վերադարձի և վերաինտեգրման բաժնի աշխատակազմին վերապատրաստելու արդյունավետությունը:

Հայկական պատվիրակությունը հանդիպել է նաև Հյուսիսային Ռեյն Վեստֆալիա երկրամասի Ներքին գործերի նախարարության ներկայացուցիչներին: Կողմերը կարևորել են պարբերական աշխատանքային քննարկումների անհրաժեշտությունը, միգրացիոն երկկողմ գործընթացներում փորձի փոխանակումը, հարաբերությունների շարունակական զարգացումը, ինչպես նաև համավարակով և այլ հանգամանքներով պայմանավորված վերադարձի ոլորտում առաջացած մարտահրավերների հաղթահարման ուղիները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.** Չկան

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

15.11.2021